Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Կատարողական վարույթը կասեցնելու մասին

« 12 » Փետրվար 2019թ. **ք. Վանաձոր**

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության կապիտան Դ.Մափինյանս, ուսումնասիրելով 06.02.2019թ.-ին վերսկսված թիվ 03948500 կատարողական վարույթի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 10.10.2018թ.-ին տրված թիվ ԼԴ/2962/02/17 կատարողական թերթի համաձայն պետք է՝ Սուսան Վաչիկի Միսկարյանից, Աննա Մուշեղի Մխիթարյանից և Քրիստինե Մուշեղի Մխիթարյանից համապարտության կարգով հօգուտ "Կամուրջ" ՈՒՎԿ ՓԲԸ-ի բռնագանձել 4.518 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, 43.703 ՀՀ դրամ և հաշվարկվող տոկոսներ:

Համաձայն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 66 հոդվածի և 67-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի՝ բռնագանձել բռնագանձման ենթակա գումարի 5%, որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Կատարողական գործողությունների կատարման ընթացքում արգելանք է կիրառվել համապարտ պարտապան Քրիստինե Մուշեղի Մխիթարյանին սեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ, Լոռու մարզ, ք.Վանաձոր, Գ.Նժդեհի փող. թիվ 9/32 հասցեում գտնվող անշարժ գույքի՝ բնակարանի վրա, որը փորձագիտական եզրակացության համաձայն գնահատվել է 4.250.000 ՀՀ դրամ և, որը հանդիսանում է քաղաքացի-պարտապանի միակ բնակարանը:

Պահանջատեր "Կամուրջ" ՈՒՎԿ ՓԲԸ -ն գրավոր տեղեկացրել է, որ պարտապանի պարտավորության չափը 05.02.2019թ.-ի դրությամբ կազմում է 4.967 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

«Դատական ակտերի հարկադիր կատարման» մասին ՀՀ օրենքի 51-րդ հոդվածով սահմանված կարգով բռնագանձման ենթակա չէ քաղաքացի-պարտապանի միակ բնակարանը (այդ թվում բնակարանի հետ մեկ միասնական գույքային միավոր կազմող փնամերձ հողամասը և այդ հողամասի վրա առկա օժանդակ կառույցները) կամ դրա բաժինը, որը պարտապանի համար հանդիսանում է մշտական բնակության միակ վայր, և որի մեկնարկային գինը հավասար կամ ցածր է ՀՀ կառավարության կողմից 2017թ-ի հուլիսի 13-ին N 808 որոշմամբ սահմանված՝ միակ բնակարանի իրացման համար նախատեսված նվազագույն գումարից:

Բռնագանձման ոչ ենթակա միակ բնակարանի բաժնեմասի նվազագույն գումարը որոշվում է 4.900.000 ՀՀ դրամի և քաղաքացի-պարտապանի միակ բնակարանի բաժնեմասի արտադրյալով:

Վերոգրյալի հիման վրա հայտնում ենք, որ եթե պարտապանին համատեղ (բաժնային) սեփականության իրավունքով պատկանող միակ բնակարանի բաժնեմասի վրա բռնագանձում տարածելու վերաբերյալ համապատասխան կատարողական թերթի կատարման ընթացքում պարզվում է, որ պարտապանի բաժնեմասի մեկնարկային գինը հավասար կամ ցածր է կառավարության կողմից սահմանված՝ միակ բնակարանի իրացման համար նվազագույն գումարի չափից, ապա պարտապանի բաժնեմասը ենթակա չէ բռնագանձման:

Համապարտ պարտապան Քրիստինե Մուշեղի Մխիթարյանին պատկանող բռնագանձման ենթակա այլ գույք, դրամական միջոցներ չեն հայտնաբերվել, և ի հայտ են եկել սնանկության հատկանիշներ:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնում առկա են ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից՝ 17.07.2017թ.-ին տրված թիվ ԼԴ/0039/02/17 / պահանջատեր "ՎՏԲ-Հայաստան բանկ" ՓԲԸ /, 12.01.2018թ.-ին տրված թիվ ԼԴ/0613/02/17 / պահանջատեր՝ "Ինեկոբանկ" ՓԲԸ /, 12.09.2018թ.-ին տրված թիվ ԼԴ/1298/03/18 / պահանջատեր՝ "Ինեկոբանկ" ՓԲԸ /, 26.12.2018թ.-ին տրված թիվ ԼԴ 4/0397/02/18 / պահանջատեր՝ "Ֆինքա" ՈՒՎԿ ՓԲԸ /, 26.12.2018թ.-ին տրված թիվ ԼԴ 4/0407/02/18 / պահանջատեր՝ "Ֆինքա" ՈՒՎԿ ՓԲԸ / կատարողական թերթի հիման վրա գումարի բռնագանձման պահանջի վերաբերյալ հարուցված այլ կատարողական վարույթներ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 37-րդ հոդվածի 8-րդ կետով և 39 հոդվածներով, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Կասեցնել 06.02.2019թ.-ին վերսկսված թիվ 03948500 կատարողական վարույթը՝ 60-օրյա ժամկետով:

Առաջարկել պահանջատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 60-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան:

Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում:

Որոշման պատճեն ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վարչական դատարան կամ վերադասության կարգով որոշումը ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

Ավագ հարկադիր կատարող՝ ***Դ. Մատինյան***